ՀՀ Գեղարքունի մարզի
Գավառ համայնքի ղեկավար
պարոն Գուրգեն Մարտիրոսյանին

Հարգելի պարոն Մարտիրոսյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Ծովազարդ, Զ. Անդրանիկի 8-րդ փող. նրբանցք 11 հասցեում գտնվող արդյունաբերական շինությունը ռեստորանային համալիրի վերակառուցման աշխատանքների իրականացման համար, համաձայն ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման, անհրաժեշտ է իրականացնել հանրային լսումներ: Գործունեությունը նախատեսում է իրականացնել Կարեն Գալոյանը, գրանցման հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք, գյուղ Ծովազարդ, Զ. Անդրանիկի 2-րդ նրբ., տուն 2: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի Հոդված 12-ի՝ տվյալ գործունեությունը դասվում է Բ կատեգորիայի: Ռեստորանային համալիրի շենքը երկհարկանի է՝ 3065.93 քմ կառուցապատման մակերեսով: Տարածքում առկա են մի քանի շինություններ, որոնցից մի քանիսը նախատեսվում է մասնակի և ամբողջական ապամոնտաժել, իսկ մնացածը պահպանել և վերակառուցել: Գոյություն ունեցող ռեստորանային համալիրի 1251.68քմ մակերեսով տարածքը նախատեսվում է ապամոնտաժել, իսկ 2808.02 քմ մակերեսով տարածքը վերակառուցել: Գոյություն ունեցող ջերմոցները 2960.70քմ մակերեսով նախատեսվում է ապամոնտաժել: Գոյություն ունեցող կաթսայատունը և պահակատունը նախատեսվում է պահպանել:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն» ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ որոշում/ համաձայն, 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնեք.

1) հանրային լսման իրականացման վայրը, օրը և ժամը (հանրային քննարկման օրը պետք է նշանակեք Ձեր պատասխանի օրվանից հետո 21-25 աշխատանքային օրերի ընթացքում ձեռնարկողի հետ համատեղ),

2) համայնքի ղեկավարի կողմից տվյալ հանրային լսման համար համայնքի ղեկավարի իրավասությունների սահմաններում նշանակված կամ լիազորված անձի տվյալները, ով պատասխանատու է լսման կազմակերպման և անցկացման համար (անունը, ազգանունը, պաշտոնը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը):

ՀՀ Քաղաքացի՝ Կարեն Գալոյան

02.12.24թ.
+374 93884625
+374 98443880
nanoaleks8@gmail.com

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏՈՒԳ № 5731
05 12 2024թ.